

ՄԱՅԻ ԱԹՈՌ

Փետրուար 28-ին Ն. Սրբութիւնը կարճ ժամանակով մեկնեց Երևան, ուղեկցութեամբ իւր դիւանապետ Տ. Տիրայր Ծ. վարդապետի և Սինօդի անդամ Տ. Գէորգ վարդապետի:

Ն. Սրբութեան դիմաւորեցին Երևան Փոխ-Թեմակալը, Երևանի այգիների ծայրին և քաղաքի պատուաւոր անձեր:

Ն. Սրբութիւնը կատարեց այդ երթը բժշկի խորհրդով, որով ժամանակ առ ժամանակ կարեւոր էր այդպիսի շարժողութիւնները կառքով:

* *
*

Նոյն օրը ներկայացան Ն. Սրբութեան Երևանի նահանգապետը, քաղաքապետը և այլ պաշտօնական և քաղաքի մէջ դիրք ունեցող անձեր, դպրանոցի հոգաբարձութիւնը և այլն:

* *
*

Մարտի 1-ին Ն. Սրբութիւնը վերադարձաւ Մ. Աթոռ: Ուղեկցելու էին ելած կառքերով Երևանի Փոխ-Թեմակալը, պ. Քաղաքապետը, հոգաբարձութեան անդամները և ուրիշները, սրանց ամենքին օրհնելով Ն. Սրբութիւնը վերադարձրեց Երևանի այգիների ճանապարհի կիսից:

* *
*

Մարտ 2-ին Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի նախագահ Տ. Գէորգ վարդապետը և նոյն Յանձնաժողովի դպրոցական խորհրդի նախագահ Տ. Գիւտ աբեղան և տեսուչ Ս. Գեարաքեան մեկնեցին մի քանի օրով շրջակայ գիւղերը, այցելելու գաղթականական դպրոցները և քննելու գաղթական փոքրիկների կատարած յառաջադիմու-

Թիւնը Ս. Էջմիածնի Եղբ. Օգնութեան խնամքի տակ
բացուած դպրոցներում: Տպաւորութիւնը շատ գոհացու-
ցիչ է եղած և յուսադրիչ:

* * *

Մարտ 4-ին Մ. Աթոռ էր եկած նաև Երևանի Փոխ. Թե-
մակալ գեր. Տ. Խորէն եպիսկոպոս, պաշտօնական դործով:

* * *

Նոյն օրը Քիշնևի վիճակային ատեանի նախանդամ
Տ. Մեսրոպ վարդապետը հեռագրով, տուած ն. Սրբու-
թեան, յայտնեց թեմի առաջնորդ Տ. Ներսէս Արքեպիս-
կոպոսի մահը, որ տեղի էր ունեցել նոյն օրը, առաւօ-
թեան 10 ժամին:

* * *

Մարտ 7-ի գիշերը, Վաղարշապատ ձմերոց եկած * * *
գնդի զինուորների մի մասը, հարբած դրութեան, անկար-
գութիւններ սկսելով յարձակուեցան Մ. Աթոռի մեծ դար-
պասի առաջ գտնուող Ս. Էջմիածնի սեփականութիւն կադ-
մոդ խանութների վերայ և սկսեցին կողոպտել անխնայ
խանութների մէջ եղած ապրանքները, որ պատկանում
էին Վաղարշապատի վաճառականներին և գաղթականներին
դուրս թափելով, աւարի ու թալանի ենթարկեցին իսկ յետոյ
աւելի ևս տարուելով իրենց վայրի հակումներով հրդեհեցին
թէ հին, մեծ խանութները և թէ նոր շինածները:

Հրդեհն սկսուեցաւ գիշերուայ ժամը 12-ին և ամբողջ
գիշերը կրակի ու բոցերի մատնուած ապրանքին ու խա-
նութներին ոչ ոք չէր համարձակոււմ մօտենալ, ոչ խա-
նութպանները, ոչ ապրանքի տէրերը և ոչ զինուորական
վարչութեան պետերը, սրանք անգոր էին գտնում իրենց
միջամտել սանձարձակ զինուորներին: Հրացանածգութիւնն
անընդհատ, աղաղակն ու հարբած զինուորների ձայները
թաղաւորում էին: Հրդեհի բոցավառ լոյսը երկինք բռնած,
բոսոր էր ձգել Մ. Տաճարի աւագ գմբէթի և նորա խաչի
վերայ, որ դարեր շարունակ այդպիսի տեսարանի ակա-
նատես չէին եղած:

Միաբանական ուխտը, լքուած ու անարեւել շրջում էր Մ. Տաճարի շուրջը, անգոր որևէ միջոց ձեռք առնելու այդ վայրի զգացումները զսպելու համար:

Հրդեհը տեւեց մինչև առաւօտ և ծագող արևը վկայ եղաւ այն անարի գործին, որ գործուել էր:

Վնասների քանակը հասնում է մի քանի հարիւր հազար ըսելու, թէ Մայրավանքին և թէ գիւղացիներին ու գաղթականներին:

* *

Մարտ 8-ին Երևանից եկաւ նահանգապետը, գիշերը կատարուած իրողութեան ծանօթանալու և միջոցներ ձեռք առնելու այն մղձաւանջի և ծանր հոգեկան վիճակը փառատելու համար, որի մէջ էր Մ. Աթոռը, Հոգևոր ձեմարանը, Վաղարշապատը և այլ հաստատութիւնները, որոնց բոլորի վերայ դեռ ևս ծանրացած էր վերահոս սպառնալիքը:

Նահանգապետը ներկայանալով Ն. Սրբութեան ցաւ յայտնեց պատահած տխուր իրողութեան համար և խոստացաւ բոլոր հնարաւոր միջոցները ձեռք առնել խաղաղութիւնն ու կարգը վերականգնելու համար:

Նոյն օրը մեկնեց Իգդիր, այդ շրջանի զօրքի գլխաւորի հետ խորհրդակցելու և անկարգութիւնները վերացնելու համար:

* *

Նոյն օրը, ուշ գիշերին Վաղարշապատ ժամանեց Իգդիրից * * * գնդի կողակիների մի վաշտ, որպէսզի կարգը վերականգնելու հսկողութիւն ունենայ:

* *

Մարտի 9-ին Վաղարշապատում ձմերոյ զինուորները զինուորական Իշխանութեան կարգադրութեամբ հեռացան որով և վերջացաւ այն ծանր տազնապի օրերն ու հոգեկան տանջանքները, որի մէջ էր ազգաբնակչութիւնը:

* *

Մարտի 19-ին տեղի ունեցաւ Ս. Էջմիածնի Եղբ. Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովի նիստը, ուր ի միջի այլ խնդիրների քննութեան առնուեցաւ Միջազետքի հայութեան օգնութեան հասնելու խնդիրը:

Վերջին ստացած տեղեկութիւնների համաձայն՝ Միջազետքում Անդլիական զօրքի յաջօղութեամբ Կուտ-էլ-Ամար, Բաղդադ և այլն, վերցնելուց յետոյ, յայտնի եղաւ, Անդլիական զօրապետ Մօզի տուած տեղեկութիւնների հիման վերայ, որ Բաղդադում և շրջակայքում կան բաւական թուով հայեր, տեղացի և տարազրուածներ, որոնց նիւթական օգնութեան հասցնելու խնդիրը օրական հարց էր:

Եղբ. Օգնութիւնը աչքի առաջ ունենալով Հայրապետական Դիւանի տեղեկութիւնները, որով Թեհրանում եղած էիք. Օգն. ճիւղը սկսել էր արդէն կազմակերպել Միջազետքի հայութեան օգնութեան գործը և Ն. Սրբութեան աջակցութիւն էր խնդրել դրամական օժանդակութիւն տալու համար,—որոշուեց խնդրել Ն. Սրբութեան հաճութիւնը ուղարկել մի կարող հոգևորական, գնելով նորա տրամադրութեան տակ, առ այժմ, 50000 բուրլի, որպէսզի մեկնէ Միջազետք և օգնութեան գործը կազմակերպէ:

Զեկուցանելով այս մասին Ն. Վեհափառութեան, Վեհ. Հայրապետը պատուիրեց բանալ Եղբ. Օգն. անունով այդ վարկը, որպէսզի անմիջապէս օգնութեան գործը կազմակերպուի, իսկ եթէ հարկ կը լինի աւելի մեծ գումարի, այդ ևս կը տրամադրէ հայութեան մնացորդների փրկութեան գործի համար:

* *

Մարտ 19-ին կարճատե հիւանդութիւնից յետոյ վախճանուեցաւ ծերունի Անտօն վարդապետ Վարդապարեան, 75 տմեայ հասակում և թաղուեցաւ 22-ին, միաբանական դերեզմանատանը:

* *

Մարտ 19-ին Մայր Աթոռ ժամանեց Պետրոգրադից փաստաբան պ. Յովհաննէս Խ. Զաւրեան, որ արժանացաւ Ն. Ս. Օծութեան առանձին ուկնդրութեան:

Պ. Զաւրեան մնալով Մ. Աթոռում, իրրե նորա հիւր, մեկնեց մարտ 23-ին, տանելով իւր հետ լաւագոյն յիշատակներ Ս. Էջմիածնից:

* *

Ն. Սրբութիւնը առանձին պատգամաւորութեան միջոցով կամենալով շնորհաւորել ժամանակաւոր նոր Կառավարութեան ներկայացուցիչ Յանձնակատար Մարմնի Կովկաս ժամանելը, բարեհաճեց այդ յատուկ պատգամաւորութեան անդամներ նշանակել Վրաստանի թեմի առաջնորդ Գեր. Տ. Մխիթար եպիսկոպոսին. Շամախու թեմի առաջնորդ Գեր. Տ. Բագրատ եպիսկոպոսին և Սինօդի անդամ բարձր. Տ. Գէորգ վարդապետին, պատուիրելով ներկայանալ Յանձնակատար Մարմնի պ. պ. անդամներին և իւր կողմից յայտնել իւր խնդակցութիւնը նոր իրաւակարգի հաստատման նկատմամբ, շնորհաւորել նոցա մուտքը Կովկաս և իւր Հայրապետական օրհնութիւնը տալ նոցա, իրենց առաջ դրած բարդ և փափուկ խնդիրը լուծելու կարողութիւն, ոյժ և խոհականութիւն հայցելով:

Տ. Գէորգ վարդապետը մեկնեց Մ. Աթոռից մարտ 23-ին, ուր պիտի միանար իւր ընկերակիցներին Տփլիս: Նախօրոք հեռագրուած էր Տ. Բագրատ եպիսկոպոսին մեկնել Բաղուից Տփլիս և սպասել Ն. Սրբութեան կարգադրութեան:

* *

Մարտի 23-ին, ըստ նախկին սովորութեան, Ղաղարու Յարութեան շարաթ օրը, ճեմարանի սաներն արժանացան Ս. Հաղորդութեան:

* *

Մարտի 25-ին Ծաղկազարդի նախատօնակին, Ն. Սրբութիւնը հաճեց Տաճար իջնել, առաջնորդուելով եպիսկոպոսական դասից:

Իջման Ս. Սեդանը և Ն. Սրբութեան հետին դասի Հայրապետական դահլ զարգարուած էր ուռիների թարմ ոստերով և արմաւինիների շոր ճիւղերով:

* *

Մարտ 26-ին. Ծաղկազարդի օրը, Ն. Սրբութիւնը, չնայելով իւր բազմազրադ վիճակին, հաճել էր Տաճար իջնել առաւօտեան ժամերգութեան և ներկայ լինել սկզբից մինչև աստուածաշտութեան վերջը:

Ն. Սրբութիւնը ներկայ էր նաև Ս. Պատարագին, որի ժամանակ Մ. Աթոռի խնամքի տակ ապաստանարան գտած բոլոր տասը որբանոցների 600-ից աւելի որբերը մաքուր հագնուած, պատշաճ հանդիսաւորութեամբ, իրենց կառավարչուհիների, դաստիարակչուհիների և բոյրերի առաջնորդութեամբ արժանացան Ս. Հաղորդութեան:

Պատարագին էր Գեր. Տ. Անանեա արքեպիսկոպոսը:

Պատարագից յետոյ բոլոր որբերը զոյգ զոյգ, տղաներն ու աղջիկներն առանձին խմբակներով երկշար կանկնած ապաստում էին Ն. Սրբութեան Տաճարից ելնելուն: Վեր, Հայրապետը անցնելով իրեն առաջնորդող Լալիսկոպոսական դասի հետ՝ հայութեան նահատակութեան այդ կենդանի լիկաների շարքերով, ի սրտէ օհնում էր այդ փոքրիկներին, նոցա ուշիմութիւն ու շնորհ մաղթելով, որպէս զի ապագայի յոյսերի կենդանի սերմնարաններ լինեն կենդանութիւն ստանալիք հայրենիքի մէջ:

* *

Նոյն օրը, երեկոյեան, Ն. Սրբութիւնը բարեհաճել էլ Տաճար իջնել և ներկայ լինել Դոնարացէքի արարողութեան:

* *

Աւագ Հինգշաբթի երեկոյեան, Ն. Սրբութիւնը բարեհաճեց Տաճար իջնել և ներկայ լինել Աւագ Ուրբաթի հսկման ամբողջ կարգին, սկզբից մինչև վերջը:

Ն. Սրբութիւնն ինքը կարգաց առաջին Աւետարանը:

* *

Ապրիլ 1-ին, Շաբաթ երեկոյեան, Ն. Սրբութիւնը հաճեց Տաճար իջնել և ներկայ լինել ճրագալոյցի կարգին, Ս. Պատարագին և հանգիսադիր լինել Զատիկական նախատօնակին:



Ապրիլ 2-ին, Զատիկական առաւօտեան ժամերգութեան, Ն. Սրբութիւնը բարեհաճեց իջնել Տաճար, ժամերգութեան սկզբից իսկ, շնայելով վաղ առաւօտեան պահուն, և մնալ մինչև ժամերգութեան վերջը:

Ապա նոյն օրը ներկայ էր նաև Ս. Պատարագին, որի աւարտումից յետոյ, ըստ ընդունուած սովորութեան, Ն. Սրբութիւնը բազմելով Ս. Իջման Սեղանի առաջ դրած Հայրապետական գահի վերայ, ընդունեց միաբանական ուխտի շնորհաւորութիւնները: Ամբողջ միաբանութիւնը խոնարհոււմ, համբարում էր Ս. Հայրապետի ձեռքին բռնած Ս. Խաչը, ապա համբարում էր Ն. Սրբութեան օծեալ աջը:

Միաբանական ուխտից յետոյ Հայրապետական Աջն առնելու արտօնուեցան նաև ձեմարանի սաները:

Պատարագին էր Տ. Յուսիկ արքեպիսկոպոսը:



Պատարագից յետոյ Ն. Սրբութիւնը բարեհաճեց ընդունել վեհաբանում Զատիկական շնորհաւորութեան եկած Հոգեւոր ձեմարանի Ուսուցչական մարմինը, գիւղի պատուաւոր ներկայացուցիչներին, Սինօղի ծառայողներին և այլոց:



Ապրիլ 3-ին, Երեանից Մ. Աթոռ ժամանեց Երեանի Փոխ-Թեմակալ Գեր. Տ. Խորէն եպիսկոպոս Ն. Սրբութեան անձամբ մատուցանելու իւր և իւր հօտի շնորհաւորութիւնները Վեհ. Հայրապետին:



Ապրիլ 4-ին Երևանից Մ. Աթոռ եկան յատուկ ներկայացուցիչներ, շնորհաւորելու Ն. Սրբութեան Չատկահան տօները:

Ներկայացուցիչներ էին Երևանի Քաղաքագլուխ պ. Ս. Խաչատրեան, երդուեալ հաւատարմատար Գր. Խ. Տէր-Խաչատրեան, պ. պ. Յովհ. Մելիքեան, Գ. Ամիրեան, երդ. հաւատարմատար Գր. Պետրոսեան:

*
*

Ապրիլ 5-ին Մ. Աթոռ ժամանեց Ատրպատականի թեմի առաջնորդ Գեր. Տ. Ներսէս եպիսկոպոս, որ յատկապէս հրաւիրուած էր Ն. Սրբութեան կողմից իւր թեմի գործերի մասին զեկուցումն անելու Ն. վեհափառութեան:

*
*

Ն. Սրբութիւնն ի նկատի ունենալով Ռուսաց Կայսրութեան կազմի մէջ տեղի ունեցած մեծամեծ փոփոխութիւնները, որոնք և, բնականաբար, արձագանք պիտի տային Հայութեան կեանքի և Հայ եկեղեցու ներքինի վերայ և ի սրտէ ցանկանալով ընդառաջ գնալ այն բոլոր պահանջներին, որ երկար ժամանակից ի վեր, զանազան արտաքին արգելադրութ հանգամանքների պատճառով, հնարաւորութիւն չէին գտած իրականանալու, այլ և կամենալով նախապատրաստել այն հարցերը, որոնք կարող են առաջ գալ, — բարեհաճեց մի յատուկ Յանձնախումբ կազմել Մ. Աթոռի միաբաններից և նոցա խորհրդակցութեան տալ այդ հարցերը, ուր Յանձնաժողովի կողմից նախապէս արծարծուելով և քննուելով պէտք է զեկուցանուէր ի վերջնական հաւանութիւն և ի տնօրինութիւն Ն. Սրբութեան:

Այդ Յանձնաժողովի անդամներ կոչուեցան Սինօղի նախագահ Գեր. Տ. Յուսիկ արքեպիսկոպոս, Երևանի Փոխ-Թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոս, Սինօղի անդամ Տ. Մաթէոս եպիսկոպոս, Ն. Սրբութեան Դիւանապետ և Սինօղի անդամ Տ. Տիրայր Մ. վարդապետ, Սինօղի անդամ Տ.

Գէորգ վարդապետ և «Արարատ»ի խմբագիր Տ. Գիւտ ա-
բեղայ:

Յանձնաժողովի պարտականութեան սահմանների մէջ
է մտնում մշակել ժամանակաւոր հրահանգներ թեմական
ժողովների և խորհուրդների գումարման, Առաջնորդների
ընտրութեան մասին, այլ և զբաղուել 1836 թ. Պետական
հաստատութիւն ստացած «Սահմանադրութեան» վերա-
մշակման խնդրով, անդամակցութեան և գործակցութեան
կոչելով կարող հոգևորական և աշխարհիկ անձերի, որպէս-
զի պատրաստ լինի այն ուրուագիծը, որ ապագայում
քննութեան պիտի տրուի գումարուելիք ազգային Սահ-
մանադիր ժողովի առաջ:

Նոյն օրը Յանձնաժողովն սկսեց իւր զբաղմունքները,
գործակցութեան հրաւիրելով նաև Տ. Ներսէս եպիսկոպոս-
սին, ձայնի իրաւունքով, ըստ հաճութեան Վեհ. Հայրապետի:



Յանձնաժողովը զբաղուելով իւր վերայ դրած պար-
տականութեան ծրագրով, Ապրել 7-ին ներկայացրեց Ն.
Սրբութեան «Թեմական ժողովների ժամանակաւոր հրա-
հանգների» ծրագրերը, որ և հաստատուելով, Ն. Սրբու-
թեան կողմից, ինչ ինչ փոփոխութիւններով, ըստ ոգու
եկեղեցական կանոնական իրաւունքների, տրուեցաւ ի
գործադրութիւն:

Ն. Սրբութիւնը «Հրահանգների» գործառութիւնն ար-
տօնելով առանձին կոնդակով, Ապրիլ 7, № 678, նոյն այդ
կոնդակով ընդլայնեց եկեղեցու անդամներից, կանանց
իրաւունքը, որոնք այսուհետև չափահաս դառնալով, իրա-
ւունք ունին մասնակցելու համանքի բոլոր ընտրական
գործերին, ընտրելու և ընտրուելու իրաւունքով: Այլ և
արտօնեց Հայ ժողովրդին ընտրել ըստ նախնական սովո-
րութեան և կանոնների Հայ եկեղեցու, իրենց առաջ-
նորդներին, փոխանորդներին և եկեղեցու միւս բոլոր
պաշտօնեաներին:

Ն. Սրբութեան այդ կոնդակով վերականգնում է Հայ

եկեղեցու նախնական կարգերը և Հայ եկեղեցու անդամները կրկին մտնում են այն իրաւակարգի սահմանների մէջ, որ ունէին:

Եկեղեցու միւս խնդիրների և կարգերի, ներքին հարցերի, կանոնների և օրէնքների սահմանումը վերապահուած է, ըստ Կոնդակի, Աղգային Սահմանադիր ժողովին, որ տեղի կունենայ Ն. Սրբութեան նախագահութեամբ և որ կսահմանէ Հայ եկեղեցու Սահմանադրութիւնը: Այդ ժողովը, Տեառն յաջողութեամբ, Ն. Վեհափառութիւնը մտադիր է գումարել մօտ ժամանակներում, եթէ հանգամանքները արտօնեն:

Ի նկատի ունենալով Վեհ. Հայրապետի Կոնդակի կանոնական-իրաւական նշանակութիւնը, ըստ պատուէրի Ն. Սրբութեան, Կոնդակը թարգմանուեցաւ նաև աշխարհաբար և ուղարկուեցաւ բոլոր թեմակալ առաջնորդներին և փոխառնորդներին՝ կարդալ տալ եկեղեցիներում ի լուր ժողովրդի, բացաղբել նոցա նոր իրաւակարգը և ցրուել իրենց հօտի մէջ նաև աշխարհաբարը:



Ն. Սրբութիւնն ի նկատի ունենալով եկեղեցու ներքին պահանջները, իւր ապրիլ 11 № 590 Կոնդակով յանուն Սինոդի, տեղեկութիւն տալով, որ Տեառն յաջողութեամբ մտադիր է Եպիսկոպոսական աստիճան տալ՝ Սինոդի անդամ Տ. Տիրայր Ծ. վարդապետին, Ճեմարանի տեսուչ Տ. Գարեգին Ծ. վարդապետին, Կարնոյ հոգևոր տեսուչ Զաւէն վարդապետին, իբրև դրան Եպիսկոպոսի Հայրապետարանի, Հարարադի թեմի ժամ. կառավարիչ Տ. Վահան Ծ. վարդապետին և Սինոդի անդամ Տ. Գէորգ վարդապետին, պատուիրեց ըստ սահմանուած կարգի երդրմանցնել նոցա նախ քան Եպիսկոպոսական ձեռնադրութիւնը:



Ապրիլի 11-ին Պետրոգրադից Մ. Աթոռ վերադարձաւ Ճեմարանի Տեսուչ Տ. Գարեգին Ժ. վարդապետը, որ զնացել

այնտեղ յատուկ առաքելութեամբ, Ն. Սրբութեան հաճութեամբ և օրհնութեամբ:

Այդ առաքելութեան նախատակն էր Մ. Աթոռի հոգևոր Ճեմարանի այս տարուայ արտաքոյ կարգի ծանր ծախքերի թեթևացման և նորա ապահովութեան խնդիրը, այն չափերով, որքան կարելի է առ այժմ, ներկայի պայմաններն ի նկատի առնելով իրագործել:

Անցեալ տարի, երբ Ն. Սրբութիւնը Տփլիս էր, Ճեմարանի պահպանութեան հոգածութեան համար յատուկ խորհրդակցութիւն տեղի ունեցաւ, որի ժամանակ հայաշատ քաղաքների և կենդրոնների ներկայացուցիչներն, ամենքն ևս, անխափր իրենց պատրաստակամութիւնը յայտնելին Ճեմարանի դրութիւնն ապահովելու և Մ. Աթոռ իւր ոյժերից վեր ծախքերի տակ չդնելու հարցը դրական լուծումն ստանալուն նպատակել:

Զնայելով այդ խոստման և պաշտօնական դիմումներին, սակայն խնդիրն անլուծանելի մնաց և Մ. Աթոռի վերայ կրկին ծանրացաւ Ճեմարանի պահպանութեան հոգածութեան ամբողջ դժուարութիւնը: Սակայն ներկայիս արտակարգ պայմանները աւելի ևս ծանր դրութիւն էին ստեղծել Մ. Աթոռի համար և Ն. Սրբութեան հրամանով Ճեմարանի հ. Տեսուչը մարտի սկզբներին ելաւ իւր առաքելութեամբ:

Շուրջ մի ամիս Պետրոգրադում մնալն ունեցաւ իւր ցանկալի հետեանքը: Պետրոգրադի Հայոց Եկեղեցիների Խորհուրդը սիրով յանձն առաւ լրացնել այս տարուայ արտակարգ ծախքերի մասը և ապագայում ևս օգնել, ըստ հնարուորութեան: Հայկական դպրութիւն ևս սիրով ընդ առաջ դնաց Ճեմարանի հ. Տեսչի բղձերին և առաջարկութիւններին և իրենց առատ նուիրարկութեամբ օգնութեան ձեռք մեկնեցին Մ. Աթոռին իւր կրթական գործը դիւրութեամբ տանելու: «Սմանք պահպանելու» դադափարն արձագանք տալով նոցա մէջ, շատ շատերը իրենց յատուկ դումարները առին, յանուն իրենց, մըշտական սաներ ունենալու հոգևոր Ճեմարանի մէջ:

Առ այժ նուիրատուների տուած գումարը Պետրոգրադում առ այժմ հասնում է 175,000 ռուբլի, որ յոյս կայ աւելի ևս պիտի աճէ:

Միւս հայ կենտրոններն ևս, անշուշտ, սիրով կվերաբերուն մեր կրթական գործի յաջողութեան, երբ հերթն իրենց կը գայ:

* *
*

Ապրիլ 12-ին, Պարսկաստանից Մ. Աթոռ ժամանեց Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդական խորհրդարանի նախագահ Տ. Եզնիկ վարդապետ Երկարակեցեան, որ և նոյն օրը բազմ ունեցաւ արժանանալ Ն. Ս. Օծութեան ուկնդրութեան և ստանալ Հայրապետական օրհնութիւն:

Տ. Եզնիկ վարդապետը կանչուած էր Մ. Աթոռ, Ն. Սրբութեան յատուկ հրամանով, նախ Պարս-Հնդկաստանի թեմի մասին զեկուցումն տալու Ն. Սրբութեան, ապա հրահանգներ ստանալու վեհ. Հայրապետից թեմի նկատմամբ, ուր երկար տարիներ սեփական առաջնորդ չունենալու պատճառով՝ թեմի գործերը 'ցանկալի կանոնաւորութեան մէջ չէին:

Տ. Եզնիկ վարդապետին Մ. Աթոռ կանչելը կապուած էր և Միջագետքի հայութեան օգնութեան ուղարկելու հարցի հետ: Ն. Սրբութիւնն աչքի առաջ ունենալով եղած դիմումները, Եզրայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովի որոշումն ու մտադրութիւնը ուղարկել մի հոգևոր ներկայապացուցիչ Միջագետքի հայութեան նիւթական նպաստ հասցնելու գործին դուրս կանգնելու համար, ցանկութիւն ունէր այդ գործը յանձնել նորան: Սակայն ի նկատի ունենալով այն նոր ստացած տեղեկութիւնները, որով պարզուեցաւ, որ Բաղդատի Պատրիարքական-փոխանորդը և տեղական առաջնորդը կենդանի է և իւր հօտի խնամատարութեամբ է տարուած, որ Թեհրանի Եզրայրական Օգնութեան Յանձնաժողովը արդէն ձեռնարկել է օգնութիւնը կազմակերպելու գործին, որի համար և դիմել էր Ն. Սրբութեան և նիւթական ու դրա-

Ճական աջակցութիւն խնդրել, ի նկատի ունենալով և այն, որ Ատրպատականի առաջնորդի ձեռքով ևս կազմակերպուած է նոյնպէս Օգնութեան հասնելու գործ Միջագետք արսորուած հայութեան, ուստի աւելորդ համարուեցաւ նոր հոգևոր ներկայացուցիչ ուղարկել, որ կապուած էր նորա-նոր ծախքերի հետ, բարուոք համարեց Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովի որոշած գումարը, 50000 ըսելին, յատկացնել մասամբ Թեհրանի Եղբայրական Օգնութեան Յանձնախմբերին, փոխադրելով Թումանեան Առևտրական տան միջոցով գումարի մի մասը, իսկ միւս մասը յատկացնել Ատրպատականի Առաջնորդարանի գործող մարմինն, (որ Քաղաքների միութիւնից ևս նոյն նպատակի համար ստացել էր քսան հազար ըսելի) և դրամն ուղարկէր Տ. Ներսէս եպիսկոպոսին, պարտաւորութիւն դնելով Թեհրանի և Թաւրիզի խմբերի վերայ բաժանել Միջագետքի Օգնութեան կազմակերպութիւնը երկու շրջանի՝ Բաղդադի և Մուսուլի շրջանների, որպէս զի իւրաքանչիւրն իւր շրջանի հոգատարութեան գործով միայն զբաղուէր:

* * *

Ապրիլ, 13-ին Մ. Աթոռ ժամանեց Ղարաբաղի թեմի ժամ. Կառավարիչ Տ. Վահան ծ. վարդապետ, որ նոյն օրն և աժանացաւ Ն. Սրբութեան ուկնդրութեան և օրհնութեան:

* * *

Ն. Սրբութիւնը ապրիլ 14-ին, յատուկ Կոնդակով, յանուն Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվատեանի, պատուիրեց Տ. Զաւէն, Եզնիկ, Վրթանէս և Գէորգ վարդապետներին ծայրագոյն վարդապետութեան և Տ. Գիւտ արեղային վարդապետական մասնաւոր իշխանութեան աստիճան տալ:

* * *

Ապրիլ 15-ին Տ. Եզնիկ, Վրթանէս և Գէորգ վար-

դասկանները, Ս. Հռիփսիմէի վանքում ստացան ծայր. վարդապետութեան և Տ. Գիւտ արեղան մասնաւոր իշխանութեան աստիճան և ապա ներկայական Ն. Սրբութեան օնրհնութիւնն ստանալու:

* * *

Նոյն օրն առաւօտեան 11 ժամին, Մ. Տաճարում Ս. Իջման սեղանի առաջ, ըստ աւանդական կարգի, եպիսկոպոսական ձեռնադրութեան արժանանալու համար, որոշուած երգման կարգը կատարեցին Տ. Տիրայր, Գարեգին, Վահան և Գէորգ ծ. վարդապետները:

Երգման ժամանակ ներկայ էին Սինօզի անդամներ Տ. Յուսիկ արքեպիսկոպոս, Տ. Մատթէոս եպիսկոպոս և Տ. Սահակ վարդապետ:

Ընծայացուները ծնկաշոր Ս. Իջման սեղանի առաջ, իւրաքանչիւր առանձին կարդաց երգման թուղթը, սրով Հայ եկեղեցու դաւանութեան, կարգերին, եկեղեցու հովուապետին, նորա հրամաններին, Մ. Աթոռի շահերին և իրրե միաբան նոյն Աթոռի, միշտ հաւատարիմ լինել խոստացան:

Երդումից յետոյ իւրաքանչիւրն առանձին ստորագրում էր իւր երգման թուղթը, որ և վաւերացնում էր ներկայ եղողների և երդմնեցուցիչ Տ. Արիստակէս վարդապետի ստորագրութիւններով և դնում էր Ս. Իջման սեղանի պատուանդանի վերայ, ի հաստատութիւն:

Երդուելուց յետով ընծայեալներն առաջնորդուեցան Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի կողմից Վեհաբան, ուր Ն. Սրբութեան օրհնութիւնն ստանալու արժանացան:

* * *

Ապրիլ 15-ին Շաբաթ երեկոյեան, Ն. Սրբութիւնը հաճեց Մ. Տաճար իջնել, սովորական կարգով:

Ի նկատի ունենալով, որ յաջորդ օրուայ եպիսկոպոսական ձեռնադրութեան ժամանակ պատարագիչը պիտի լիներ Վեհ. Հայրապետը: Ն. Սրբութիւնը նոյն երեկոյեան

ինքն էր կատարում աւագերէցի պարտաւորութիւնները. կարդացած աղօթքի և աւետարանի ընթերցման ժամանակ, ըստ աւանդական կարգի, ընծայացուները չորում էին Նորա առաջ, մինչև աղօթքի և աւետարանի ընթերցումի վերջը:

Նոյն կարգը պահպանուում էր և յաջորդ օրուայ առաւօտեան ժամերգութեան ժամանակ:

* * *

Ապրիլ 15-ին, երեկոյեան Մ. Աթոռ ժամանեց կարհից, Ն. Սրբութեան հրամանով իբրև իւր ներկայացուցիչ այնտեղ գնացած, դաղթականական գործերը վարելու և կանոնաւորելու համար, Տ. Զաւէն վարդապետ:

* * *

Ապրիլ 16-ին, Ն. Սրբութիւնն, իբրև օրուայ պատարագիչ, հաճեց Տաճար իջնել, առաւօտը շատ կանուխ և մասնակցեց առաւօտեան ժամերգութեան:

* * *

Ապրիլ 16-ին, առաւօտեան ժամերգութիւնից յետոյ, Ս. Հոսիփօսիմէի վանքում, Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվասեանը ծայրագոյն վարդապետութեան աստիճան տուեց Տ. Զաւէն վարդապետին:

Ապա Տ. Զաւէն ծ. վարդապետը Մ. Տաճարում, Ս. Իջման սեղանի առաջ չորած, ներկայութեամբ Աինօղի անդամների և երդմեկեցուցչի, կարդաց իւր խոստմնագիրն ու ստորագրեց, որից յետոյ արժանացաւ Ն. Սրբութեան օրհնութեան վեհարանում:

* * *

Առաւօտեան 10 ժամին Մ. Տաճարի զանգակների դողանձիւնի տակ Ն. Սրբութիւնը, առաջնորդուելով եպիսկոպոսական դասից, իջաւ Տաճար եպիսկոպոսական ձեռնադրութեան:

Ն. Սրբութիւնից առաջ Տաճար էին գնացել զդեատա-

ւորուելու ընծայացուները, և կազմ ու պատրաստ սպասում էին ն. Սրբութեան: Վեհ. Հայրապետը Տաճար մըտնելով առաջնորդուեցաւ ս. Գէորգ Զօրավարի խորանը՝ զգեստաւորուելու, մինչ Տաճարի մէջ երգեցիկ խումբը «Խորհուրդ խորին» էր երգում:

Վեհ. Պատարագիչն զգեստաւորուելով ելաւ խորանից: Առաջից գնում էին, ըստ ձեռնադրութեան Մաշտոցի, եկեղեցու բոլոր նուիրապետական կարգի աստիճանների ներկայացուցիչներից երկ-երկու հոգի, իրենց աստիճանի և կարգի համապատասխան զգեստաւորութեամբ:

Հանդիսաւոր թափօրը կազմուած էր այսպէս. առաջից գնում էր դպիրների երգչական դասը, երգելով «Խորհուրդ խորին»:

Ապա հետևում էր մեծ խաչը, խաչվառները և լապտերները:

Ապա եկեղեցու նուիրապետութիւնն այս կարգով.

Երկու Սաղմոսասաց, հազած սպիտակ շապիկ, մէջքները ածած կարմիր դօտի և ձեռքներին բռնած մի-մի Սաղմոս:

Երկու Դռնապան, սպիտակ շապիկ հազած, բայց առանց դօտիների, ձեռքներին բռնած Տաճարի աւագ-դռան մեծ բանալիները:

Երկու Ընթերցող, հազած ծիրանագոյն շապիկ, ձեռքներին բռնած Մարգարէից գրքերը:

Երկու Եղմնեցուցիչ, հազած ծաղկազարդ դիպակ շապիկ, ձեռքներին բռնած Մկրտութեան Մաշտոցը:

Երկու Զահրնկալ, հազած կարմիր շապիկ, ձեռքներին բռնած մի-մի աշտանակ, վառած մոմերով, ս. պատարագի բաժականոցը, լուացման արծաթեայ կոնքն ու շոնիճը, ուսերին ձգած լուացման դենշակը կամ սրբիչը:

Երկու Կիսասառկաւագ, հազած դիպակ ոսկեգոյն շապիկ, նեղ թևերով, բազկուրարը ձախ թևերին, կրծքին դրած Առաքելական գրքերը և Խորհրդատեարը և ձեռքներին բռնած Սկիհը, դատարկ, ծածկուած մաղզմայով, առանց ծածկոյթի:

Երկու Սարկաւագ, հագած դեղնագոյն շապիկ, ուրարները ձախ ուսին, կրծքին ս. Աւետարան և աջին՝ բուրժառ, առանց կրակի և խնկի:

Երկու Քահանայ, քահանայական ամբողջ զգեստաւորութեամբ, ձեռքներին մի-մի Մասնատուփ, Տէրունական մարմնով, սքողուած:

Երկու Եպիսկոպոս, ամբողջ եպիսկոպոսական զգեստաւորութեամբ, ձեռքներին արծաթեայ հովուական գաւազան: Երկու վկայ-եպիսկոպոսն էին գեր. Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվատեան և Տ. Ներսէս եպիսկոպոս Մելիք-Թանգեան:

Ապա գալիս էին երկու զոյգ կերօնակիր, ձեռքներին բռնած արծաթեայ ձողաբարձ լապտերներ:

Սոցա հետևում էին երկու վարդապետ, կարմիր շուրջառով, որոնք կրում էին Հայրապետական Խաչն ու Գաւազանը:

Սոցա հետևում են չորս բուրժառակիր սարկաւագ, հագած սպիտակ մետաքսեայ շապիկ, ուրարներն ուս ընդ անութ ձգած, որոնք խնկարկելով յետ-յետ էին գնում:

Ապա երկու սարկաւագ, կարմիր մետաքսեայ շապկով և սպիտակ ուրարներով ձախ ուսին, որոնք կրում էին Հայրապետական Քօղը:

Սոցա հետևում է Սրբազնակատար Հայրապետը, զգեստաւորուած պաշտօնեաներով, խաչն աջին և մեծ հովուական Լուսաւորչի գաւազանը ձախ ձեռքին, խաչակնքելով աջ ու ահեակ, առաջանում է դէպի Տաճարի ատեանը:

Ապա գալիս է Խաւրսավիլակը, հագած սպիտակ մետաքսեայ ծաղկէ շապիկ, փորուրարով, դօտևորուած, թագպան աջ թևին, իսկ ձախ թևը առանց բազպանի, գլխին խարտավիլակի յատուկ Սաղաւարդը:

Ապա ամենից վերջը գալիս են նուիրեալները՝ Տ. Տիրայր, Տ. Գարեգին, Տ. Զաւէն, Տ. Վահան և Տ. Գէորգ ծ. վարդապետները, քահանայական զգեստաւորութեամբ:

Հասնելով Տաճարի հարաւային կողմը, ս. Յովհաննէս Մկրտչի սեղանի աստիճանների առաջ, կանգնում են այդ-

տեղ ամենքը, երեսները դէպի հիւսիս։ Սրբազնակատար Հայրապետը անցնում է իւր պաշտօնեաներով Իջման ս. սեղանի առաջ «Հրաշափառ Աստուած» շարականի երգակցութեամբ։ Կատարում է լուսացման կարգը և իւր պաշտօնեաներով, նախկին կարգով, առաջանում է և հիւսիսային ս. Ստեփաննոսի սեղանն է բարձրանում։

Հարաւային սեղանի աջ և ձախ կողմը դրուած աթոռների վերայ տեղ են բռնում վկայ եպիսկոպոսները։ Նուիրապետական թափորի վերջին շարքին միանում են ժողովրդի ներկայացուցիչներից երկ-երկու հոգի, աղքատների և իշխանների դասակարգից։

Ս. Ստեփաննոսի սեղանի վերայ ծնկաչոք և բազկատարած Պատարագիչ Հովուապետը «Ընտրեալի» երգակցութեամբ իւր աղօթքներն է վերառաքում Տիրոջը իրեն ոյժ և կարողութիւն տալու ս. Եկեղեցու սպասաւորութեան կոչուող նուիրեալներին ս. Հոգու շնորհաց արժանացնելու համար։ Ապա խորհրդի սպասը գնելով և խնկարկելով ժողովրդին, բազմում է նոյն սեղանի մէջ տեղը բարձրագիւր պատուանդանի վերայ դրուած Հայրապետական Գահի վերայ, որի առաջ փռուած է ծիրանի թաւշեայ թևատարած արծուենշան գորգը։

Այդ րոպէից սկսւում է Հայոց Եկեղեցու նուիրապետութեան ձեռնադրութեան կարգի ամենից աւելի յուզիչ, ակնապարար և խորհրդաւոր արարողութիւնը. մի արարողութիւն, ուր Հայ Եկեղեցին փայլում է իւր ամբողջ ոգով, իւր բուն էութեամբ, ուր եկեղեցու և ժողովրդի ներկայացուցիչներն ի մի դումարուած գալիս են վկայելու նուիրեալների արժանաւորութեան մասին, խնդրելով Հայրապետի շնորհարաշխ աջակցութիւնն ու սրբազործումը։ Քրիստոնէական եկեղեցիներից և ոչ մէկը չէ պահպանել այդ անքակ միութեան և ներքին ոգու դուզողութեան խորհրդաւոր պատկերը, բացի Հայ Եկեղեցուց։

Խորտավիլակ Գեր. Տ. Խորէն եպիսկոպոսն առաջ դալով խնդրում է Հայրապետից եկեղեցու բոլոր դասերի և ժողովրդի ներկայացուցիչների կողմից, ներկայացնել

Իրեն այն անձերին, որոնց եկեղեցին կամենում է եպիսկոպոս տեանել իրենց։

Հետզհետէ խարտավիլակի հրաւերով «Հրամայեցէք Սաղմոսացք», «Հրամայեցէք դոնապանք», «Հրամայեցէք ընթերցողք» են., երկու բուրվառակիրներ Վուրբ աստուածի» երգակցութեամբ, հիւսիսային կողմից առաջ են գալիս նուիրապետութեան բոլոր դասակարգի ներկայացուցիչներն, իրենց արտաքին նշանակներով, որոնք գալով չորում են Հայրապետական դահլիճի առաջ, ս. Ստեփաննոսի սեղանի աստիճանների մօտ, ստանում են Ս. Հայրապետի օրհնութիւնն ու զոյգ—զոյգ աջ և ձախ կանգնում դասի մէջ։

Խարտավիլակի «Հրամայեցէք եպիսկոպոսունք» հրաւերի վերայ առաջ են գալիս վկայ—եպիսկոպոսները, և ստանալով Հայրապետի օրհնութիւնը, բարձրանում են սեղան և աթոռ առնում Հայրապետի աջ և ձախ կողմը։

Ապա «Հրամայեցէք իշխանք» և «Հրամայեցէք աղբատր» հրաւերով առաջ են գալիս ժողովրդի ներկայացուցիչներն, ստանում Հայրապետի օրհնութիւնը, կանգնում նուիրապետական դասի նախորդ ներկայացուցիչների մօտ, դասում։

Խարտավիլակը իջնելով բեմից, երկու բուրվառակիրների ուղեկցութեամբ, գնում է հարաւային կողմը, ուր ընծայացուները ծունկի եկած սպասում են, ինքն ևս ծունկ է չորում նոցա առաջ, բարձրաձայն երգելով «Հրամայեա, Տէր, օրհնութեամբ ասել», խնդրում է ներկայացունել նուիրեալներին։

Ս. Հայրապետի «Հրամայեալ է ձեզ» արտօնութեամբ, բուրվառակիրների «Սուրբ Աստուած»-ի երգակցութեամբ նուիրեալներն առաջանում են ծնկաչօք դէպի հիւսիսային դասը, խարտավիլակի առաջնորդութեամբ, որ ոտքի է ելած։

Երեք հանգրուանով, նոյն կարգով, առաջանում են մինչև ս. Ստեփաննոսի սեղանի առաջին աստիճանը, ուր քնում են ծնկաչօք, այն ինչ խարտավիլակը ներկայաց-

նում է նոցա վաւերագրերը, որով կոչւում են յեպիսկոպոսութիւն:

Վաւերագրերի և հանրագրերի բարձրաձայն ընթերցումից յետոյ Հայրապետի յաջորդական իրաւունքի տրտօնութեամբ, նուիրեալները հետզհետէ բարձրանում են մի առ մի, առաջին, երկրորդ մինչև եօթներորդ աստիճանները, և ապա Հայրապետական թեատարած արծուեգորգի վերայ գալու արտօնութիւնը: Սկսւում է եկեղեցու դաւանութեան և վարդապետութեան հաւաստիացման կարգը նուիրեալների կողմից, Հայրապետի ամէն մի հարցման: Հայրապետի հարց ու դրական պատասխաններից յետոյ, առնում են նուիրեալների գլխից քահանայական օաղաւանդները և եմիփորոն ձգում, Հայրապետի օրհնութեամբ:

Արարողութեան առաջին մասն աւարտւում է և «Բարեխօսութեամբ»-ի երգակցութեամբ Սրբազնակատար Պատարագիչը իջնում է ս. Ստեփաննոսի սեղանից, բոլոր պաշտօնէութեան, նուիրապետութեան, ժողովրդի ներկայացուցիչների և նուիրեալների ուղեկցութեամբ թափորով անցնում Ս. Իջման սեղանի առջևից, հարաւային սեղանի մօտով մտնում աւագ դասը և աւագ սեղանի հիւսիսային աստիճաններով բարձրանում բեմը:

Հայրապետի հետ բեմ են բարձրանում վկայ-եպիսկոպոսները, ընծայեալները, պաշտօնէութիւնը, իսկ մնացածները մնում են ներքև՝ դասում կանգնած:

Սկսւում է ս. Պատարագը:

Հասնելով «Զի ողորմած և մարդասէր ես» մաղթանքին, Հայրապետը բազմում է աւագ սեղանի բեմի աջակողմը դրած դահի վերայ, երեսն արեւմուտք, նուիրեալներն Իւր առաջ բոլորած, ծնկաչոք:

Սկսւում է եպիսկոպոսական ձեռնադրութեան կարգի երկրորդ մասը:

Շարունակւում է ս. Պատարագը, մինչև «Ողջոյն»:

Հայրապետը կրկին աթոռ է նստում, նուիրեալներն Իւր առաջ ծնկաչոք բոլորած, կարդալով նոցա վերայ

«Գոհանամք զՔէն» աղօթքը, աջը նուիրեալների գլխին դրած: Ապա վկայ-եպիսկոպոսներից մէկը թափօրով բերում է ս. Ստեփաննոսի սեղանից ս. Միւռոնի Աղաւնին, Հայրապետն առնելով տեառնագրում է ժողովրդին և «Առաքելոյ Աղաւնոյ» շարականն երգելով, միւռոնթափ կատարում Օծման անօթի մէջ:

Սրբազնակատար Հայրապետն առաջ գալով օծում է նուիրեալի ճակատը և աջ ձեռքի բոյթ մասը ս. Միւռոնով, եպիսկոպոսական խոյրը դնել տալիս Օծեալի գլխին, տալիս «Գաւազան պատուոյ առաջնորդութեան», մատանին «առհաւատչեայ հաւատարիմ յաստուածային փեսայութիւն» և Աւետարան «ի քարոզութիւն»:

Աւարտում է եպիսկոպոսական ձեռնագրութեան կարգի երրորդ և վերջին մասը:

Զգեստաւորուած եպիսկոպոս-վկաները, նուիրապետութեան ներկայացուցիչները գնում են ս. Գէորգեան խորանը և ս. Պատարագը շարունակւում է մինչև աւարտելը:

Նոր ձեռնագրուած եպիսկոպոսները մնում են բեմի վերայ, մինչև պատարագի վերջը:

Սրբազնագործ Հայրապետն իջնում է բեմից, նորայետից նոր ձեռնագրուած եպիսկոպոսները, գալիս և կանգնում են աւագ սեղանի առաջ, երեաները դէպի արևմուտք:

Վերջին Աւետարանի ընթերցումից յետոյ Վեհ. Հայրապետը մօտենում է նոր ձեռնագրուածներին և ողջունում ու համբուրում նոցա. այդ տպաւորիչ տեսարանի առաջ շատերն են ի սրտէ յուզւում: Ապա մօտենում է ամբողջ միաբանական ուխտը և ողջունում նոր ձեռնատրուածներին, իսկ ժողովուրդը մօտենում է և համբուրում նոցա նորօծ աջը և ս. Աւետարանը:

* * *

Ս. Պատարագից յետոյ նոր ձեռնագրուած եպիսկոպոսները բարձրանում են Վեհարան և ներկայանում Ն.

Սրբութեան, ծունկի գալիս Նորա առաջ և օրհնութիւնը հայցում իրենց նոր ասպարիզի համար:

Վեհափառ Հայրապետը յուզուած շեշտով օրհնում և նոցա, յիշեցնում նոցա վերայ դրած նոր, ծանր պարտիքը և Տիրոջ կարող զօրութիւնը մաղթում նոցա գլխին, պիտանի մշակներ լինելու Հայ Եկեղեցու մեծ անդամտանի համար:

Եւ ի նշան իւր առանձին բարեացակամութեան այդտեղ և նոցա շնորհում է եպիսկոպոսական պանակէ և Իւր անդրանիկ օրհնութեան կոնդակը շնորհում նոցա:

Նոր օծեալները համբուրում են Հայրապետի շնորհաբաշխ Աջը, խոստանալով իրենց տկար ոյժերը նուիրելու Հայ ժողովրդի կարիքներին և Նորա Եկեղեցու պայծառութեան:

* *

Նոյն օրը, Երևանից էջմիածին էր ժամանել, ժամանակարոր կառավարութեան կովկասեան Յանձնակատար խմբի անդամ պ. Միքայէլ Պապաջանեան, ընկերակցութեամբ բժ. Վեֆիլովի, Աղէքսանդրոպօլի Ռազմական խորհրդի գործադիր Յանձնաժողովի նախագահի օգնական՝ գինուոր Ա. Սմիրնովի, Տփլիսի միացեալ ներկայացուցիչների խորհրդի գործադիր Յանձնաժողովի անդամ գինուոր Ա. Դենիսովի, — ներկայանալու Ն. Սրբութեան և Նորա օրհնութիւնը հայցելու:

Պ. Մ. Պապաջանեանն իւր ընկերակիցների ուղեկցութեամբ նոյն օրը մեկնեց Իգդիր:

Պ. Պապաջանեանի հետ Մ. Աթոռ էր ժամանել նաև իւր ամուսին մեծ. տիկ. Թամարա Պապաջանեան:

* *

Եպիսկոպոսական ձեռնադրութեան պատճառով Երևանից և շրջակայքից մեծ բազմութիւն էր եկած Մ. Աթոռ, ներկայ լինելու Հայ Եկեղեցու այդ անդուգական հանդիսին: Տաճարն ամբողջապէս լի էր աղօթաւոր—հանդիսականներով: Մեծ էր նաև զաղթական հայութեան քանակը,

որոնց վերայ ամբողջ արարողութիւնը կարող էր շատ մեծ տպաւորութիւն էր թողել, մանաւանդ որ նոցա համար այդ հանդէսն ու եկեղեցական արարողութիւնը առաջին անգամն էր, որ տեսնում էին:

Նոր ձեռնադրուած եպիսկոպոսների կողմից Միաբանական Ուխտը, Ճեմարանի ուսուցչական մարմինը և ներկայ հիւրերը հրաւիրուեցին ճաշի Ճեմարանի հանդիսարանը, ուր մտքերի և զգացումների գեղեցիկ փոխանակութեամբ հաճելի մտաւոր ժամանց ունեցան:

* * *

Ելեմտից նախարարը, Տերեշչենկօ, հեռագրով դիմելով Ն. Օծութեանը, խնդրել էր Նորա աջակցութիւնը «Ազատութեան փոխառութեան» բաժնեգները լայն չափերով տարածելու հայ ժողովրդի բոլոր խաւերի մէջ խնդրելով նաև իւր հովուապետական խօսքն ուղղել հայութեան և հայ եկեղեցու պաշտօնեաներին այդ նկատմամբ:

Վեհ. Հայրապետը գնհատելով այն աջակցութիւնը, որ կարող է ունենալ նոր ժամանակաւոր կառավարութիւնը «Ազատութեան փոխառութեամբ» գանձուելիք գումարներով, որ գօրեղ թշնամուն դիմադրելու և յաղթելու միջոցներից ամենից ազդեցիկն է, ինքն ընդ առաջ գնալով պ. նախարարի խնդրին, պատուիրեց գնել հարիւր հազար ռուբլու բաժնեգներ Մ. Աթոռի ազատ գումարներից, նոյնը և հաճեց կարդադրել Հայրապետական Դիւանի միջոցով, բոլոր թեմակալ առաջնորդներին, փոխանորդներին, գործակալութիւններին, որպէս զի յորդորեն իրենց հօտին սիրով գնել այդ փոխառութեան բաժնեգները, թէ անձնական օրինակ տալով, եթէ կարող են, և թէ եկեղեցական և հասարակական ազատ գումարներից դրամադրելի անել ըստ հնարաւորութեան, և գնեն փոխառութեան բաժնեգներից, յոյս յայտնելով, որ Հայ ժողովուրդը, որ միշտ ինքնաբերաբար օգնութեան է հասած հանուր հայրենիքին, այժմ ևս նոյնպիսի պատրաստակամութեամբ իւր լուծման կրերէ նորա փրկութեան և ազատութեան գործին:

* * *

Ապրիլ 17-ին Գեր. Տ. Գարեգին եպիսկոպոսն իւր անդրանիկ եպիսկոպոսական պատարագը մատուց Մ. Տաճարում Ս. Իջման Սեղանի վերայ, ըստ աւանդական կարգի:



Ապրիլ 18-ին Գեր. Տ. Վահան եպիսկոպոսը մատուց իւր անդրանիկ եպիսկոպոսական պատարագը Ս. Իջման Սեղանի վերայ:



Ապրիլ 18-ին Ն. Սրբութիւնն առանձին կոնդակով, յանուն Սինօղի, պատուիրեց ճանաչել Գեր. Տ. Վահան եպիսկոպոսին կառավարիչ Ղարաբաղի թեմի:



Ն. Սրբութիւնն ի նկատի ունենալով այն անձնագիրը քայլը, որով Տ. Թադէոս վարդապետը կատարել էր Երևանից, ամսոյս 15-ին, դառնալու ժամանակ իւր դէմ ելած և զէնքի ոյժով գաղթականական մեծաքանակ զուամարները խլելու փորձ անելու ժամանակ աւազակների դէմ, իւր կեանքի գնով այդ զուամարները փրկելով Մ. Աթոռ հասցնելով, բարեհաճեց ի քաջալերութիւն նորա այդ գործի և իւր նախկին եռանդուն ծառայութեան համար շնորհել վարդապետական խաչ կրելու իրաւունք:



Ապրիլ 22-ին իւր անդրանիկ եպիսկոպոսական պատարագը մատուց Ս. Իջման սեղանի վերայ Գեր. Տ. Տիրայր եպիսկոպոս:



Ապրիլ 23-ին Գեր. Տ. Գէորգ եպիսկոպոս մատուց իւր անդրանիկ եպիսկոպոսական պատարագը, Ս. Իջման սեղանի վերայ:



Ապրիլ 24-ին կուսակրօն քահանայութեան և արեղայութեան կարգ ստացաւ Երուսաղէմի ս. Յակովբեանց վանքի միաբան շնորհ. Մանուկ սարկաւազ Տօլապճեան, ըստ կանխագոյն հաճութեան և հրամանի Ն. Ս. Օծութեան, պայմանով, որ ներկայիս պայմանները փոխուելու ժամանակ և սլաութեամբ վերջանալուց յետոյ կրկին վերադառնայ իւր Ուխտը:

Զեռնադրողն էր Գեր. Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվատեան, որ և վերակոչեց նորան Ներսէս արեղայ:

*
*
*

Ապրիլ 24-ին վերջացան Մ. Աթոռի հոգևոր ճեմարանի թէ դասարանական և թէ լսարանական բաժինների քննութիւնները:

Դասարանական բաժնի Զ. դասարանի դասընթացն աւարտեցին 33 հոգի, որոնք և ստացան աւարտման վկայական:

Աւարտողներն են.

1 Ազիզեան Յակոբ Բէգջղաղլուցի (Եր. դ.), 2 Աղսաղալեան Սուրէն Ղզարցի, 3 Առաքելեան Առաքել Իգդիրցի, 4 Առաքելեան Յովհաննէս Դաւալուցի վերաքննելի, 5 Աւոյեան Լևոն Վաղարշապատցի, 6 Բաբաջանեան Մուշեղ Ալեքսանդրապոլցի, 7 Բէկեան (Բակունց) Ալեքսանդր Գորիսեցի, 8 Գէորդեան Գէորգ Երևանցի, 9 Գույումճեան Կարապետ Դարամանցի (Իկոնիա), 10 Գրիգորեան Փանոս Վանեցի, 11 Դանիէլեան Մուշեղ Շուշեցի, 12 Զաքարեան Վաղարշակ Դիլիջանցի, 13 Զուլոյեան Բազրատ Զաֆարապատցի երթ. վերաքննելի, 14 Թովմատեան Տիգրան Զիարէթցի (Մուշ), 15 Թրադոշեան Յարութիւն Եւդոկիացի, 16 Համբարձումեան Վահան Կովտունցի (Սեբաստ.), 17 Հայրապետեան Ալեքսան Շուշեցի, 18 Ղազարեան Վաղարշակ Իգդիր-Մաւեցի, 19 Ճուղուրեան Աւետիս Վաղարշապատցի երթ., 20 Մելիք-Աբրահամեան Վարդան Թաւրիզեցի, 21 Մուրադեան Արաքսի Ալիդամարցի քննելի, 23 Յակոբեան Մարտիրոս

Նորաշէնցի (Ղարադ.), 24 Յարութիւնեան Սարգիս Հին-
 Զուղայեցի, 25 Յովհաննիսեան Վարդան Թաւրիզեցի,
 26 Պետրոսեան Պետրոս Գրոզնեցի, 27 Սարգսեան Գե-
 դամ Ալափարսցի, 28 Սարգսեան Գուրգէն Կարսեցի,
 29 Տէր-Մինասեան Աղասի Ղփշաղցի, 30 Տէր-Յովակի-
 մեան Արտաւազդ Օշականցի, 31 Տէր-Ստեփանեան Յովսէփ
 Խորսանացի (Սերաս.), 32 Քաջունի Հայկակ Շապին-
 Գարահիսարցի, 33 Օհանեան Յարութիւն Արդարիլցի:



Ապրիլ 25-ին, Ն. Սրբութիւնը գնհատելով Տ. Վարդան
 վարդապետի պիտանի գործունէութիւնը յօգուտ Մ. Աթոռի,
 հաճեց արտօնել կրելու ծաղկեայ սև փիլոն:



Ն. Սրբութիւնն ի նկատի ունենալով Սեանի միաբան
 Տ. Արիստակէս վարդապետ Զուլոյեանի երկար տարինե-
 րից ի վեր Մ. Աթոռի պաշտօնավարութիւնը, հաճեց ըն-
 դունել նորան միաբան Մ. Աթոռի:



Ապրիլ 26-ին Գեր. Տ. Զաւէն եպիսկոպոս մատուց իւր
 անդրանիկ եպիսկոպոսական պատարագը Իջման ս. սեղանի
 վերայ:



Նոյն օրը իւր պաշտօնավայրը, Շուշի մեկնեց Գեր-
 Տ. Վահան եպիսկոպոս, ստանալով Ն. Սրբութեան խրատ-
 ներն ու օրհնութիւնը իւր և իւր հօտին մատուցանելու
 համար, այդ առթիւ և յատուկ կոնդակ շնորհելով, յա-
 նուն Ղարաբաղի թեմի հայ ժողովրդի:



Նորին Սրբութիւնն ի նկատի ունենալով, որ Վանի,
 Բայազէտի, Ալաշկերտի և շրջակայ միւս վայրերը ժողո-
 վուրդը զրկուած է հոգևոր տեսչութիւնից, որի մասին
 լրագմիցս խնդրել են տեղական և գաղթական հայութեան

ներկայացուցիչները, հաճեց իւր ապրիլ 24 № 690 կոնդակով ընդհանուր հոգևոր տեսուչ և վերահսկող նշանակել այս վայրերի համար Ատրպատականի առաջնորդ Փեր. Տ. Ներսէս եպիսկոպոսին:

Միաժամանակ պատուիրել հաճեց հոգալ աւերուած և անշէն դարձած վանքերի, եկեղեցիների մասին, վերաշինել ուր հնարաւոր է, հոգալ նոցա պահպանութեան, եկեղեցական կալուածների, նոցա տիրապետութեան և ի յայտ ածելու մասին, վանքերում հսկողներ կամ վանահայրեր, եկեղեցիների համար քահանաներ, կալուածների պահպանութեան համար կառավարիչներ նշանակել, — և այս մասին կարևոր հրահանգներ տալով: Իսկ դոցա հոգածութիւնն ու պահպանութեան ծախքերի համար պատուիրեց Եղբ. Օգն. Գլխ. Կարգադիր Յանձնաժողովին կարևոր միջոցներ ձեռք առնել նոր կարգուած հոգևոր Տեսչի հետ խորհրդակցելով:



Ապրիլ 26-ին, Վ.Ե.Հ. Հայրապետի հաճութեամբ, Տպարանի ժողովի անդամ Տ. Վարդան վարդապետ Տփիսիս մեկնեց հիւանդութեան պատճառով:



Շամախեցի, բազուարնակ՝ հանգուցեալ Կարապետ—բէկ Պօղոսեան Լալայեանի ժառանգները, օր. Եղիսաբէթ Լալայեան, տիկ. Մարիամ Խուբեան, տիկ. Եկատերինէ Միլիքեան և օր. Աննա Լալայեան՝ կատարելով իրենց հանգուցեալ հօր վերջին կամքը, որ կտակել էր, Ն. Սրբութեան տրամադրութեան տակ դնելով հարիւր հազար ռուբլի, կրթական և դպրոցական նպատակով, ուղարկել էին Ն. Սրբութեան այդ գումարն ամբողջապէս, խնդրելով գործադրել գումարն ըստ կտակողի ցանկութեան, կտակի 7-րդ և 8-րդ կէտերի համաձայն:

Նորին Սրբութիւնն ի նկատի ունենալով կտակի այդ կէտերը, որով ըստ 7-րդ կէտի գումարը յատկացնւում էր կրթական—դպրոցական գործի և 8-րդ կէտով տրամադրում,

որ եթէ ժառանգների և ամենայն Հայոց Հայրապետի փոխադարձ որոշմամբ որ և է կրթական նպատակի յատկացնելու որոշ եզրակացութեան չգան, այդ դէպքում կտակած գումարի ամբողջական վերջնական որոշ նպատակի յատկացումը թողնւում է Ն. Սրբութեան, սակայն իւր սկզբնական, որոշ նպատակի շնորհուելու պայմանով, — Վեհ. Հայրապետի կողմից այդ գումարն ամբողջապէս ուղարկուեցաւ ս. Էջմիածնի Սինօղը, պատուիրելով ա) անձեռնմխելի պահել այդ գումարն ամբողջապէս, բ) յատկացնել այդ գումարն ամբողջապէս Մ. Աթոռի Հոգևոր Ճեմարանի պահպանութեան, գ) գումարը կոչել «Կարապետ-բէկ Պօղոսեան Լալայեանի գումար» Հոգևոր Ճեմարանում սաներ պահելու համար, դ) ամբողջական գումարից ստացած $\frac{0}{100}$ -ը միայն յանձնել Ճեմարանի վարչութեան, իւր բուն նպատակին գործադրելու, ե) գնել այժմենից իսկ ամբողջական գումարով $5\frac{0}{100}$ -աբեր արժեթղթեր, զ) ընդունել Շամախու թեմից, քաղաքներից և գիւղերից տարեկան $\frac{0}{100}$ ի չափով պահպանուող որդեգիրներ, որոնք և կը կոչուին «Կարապետ-բէկ Պօղոսեան Լալայեանի սաներ», և է) եթէ Շամախու թեմից չլրանայ սաների թիւը, ընդունել նոյն հաշուին օտարախօս հայերի շրջանից այդ նպատակով սաներ:

Ն. Սրբութեան այս կարգադրութիւնների մասին ժամանակին յայտնուած է հանգուցեալի ժառանգներին, Շամախու թեմի առաջնորդի միջոցով և ապրիլ 28, № 728 կոնգուկով ևս Վեհ. Հայրապետը հաճեց Իւր օրհնութիւնը շնորհել ժառանգներին հանգուցեալի կտակի իմաստը կատարած լինելու համար, յորդորելով նոցա իրենց կողմից ևս անմասն չմնալ ազգային կրթական-գալրոցական գործի նկատմամբ, օրինակ առնելով իրենց հանգուցեալ հօրից, որի յիշատակն օրհնութեամբ թող յիշուի ապագայ իւր սաների և յետնորդ սերնդի կողմից:

Մոսկուայում վախճանուած հանգուցեալ Աղէքսանդր Ասլանեան Քարասեանի կտակակատարներ, պ. պ. Ասլան Քարասեան, Յովհաննէս Բալիեան և Մարտիրոս Շապըշնիկեան, դիմելով Ն. Սրբութեան մի խնդրով և ներկայացնելով 64,000 ռուբլու 4⁰/₀-աքեր արժեթղթեր խնդրում են այդ գումարից յատկացնել ա) 15,000 ռուբլի, յօգուտ Մ. Աթոռի Հոգևոր Ճեմարանում սաներ պահպանելուն, ի յիշատակ հանգուցեալ Աղէքսանդր Ասլանեան Քարասեանի, բ) 35,000 ռ. յատկացնել Նոյն Հոգևոր Ճեմարանին, որպէս զի ստացած տոկոսներով պահէ երկու սան, ի յիշատակ հանգուցեալի, Ռուսական կամ արտասահմանեան համալսարաններում. սաներն ընտրւում են Մ. Աթոռի Հոգևոր Ճեմարանի լիակատար դասընթացքն աւարտող սաներից, որոնց ընտրութիւնը թողնւում է Ճեմարանի մանկավարժական ժողովին, իսկ այդ ընտրութեան հաստատութիւնը վերապահւում է ամենայն Հայոց Հայրապետին. գ) 14000 ռ. յատկացնել ս. Էջմիածնի Հիւանդանոցին, այնտեղ մահճակալներ պահպանելու ստացած տոկոսներով, յանուն Ն. Սրբութեան:

Ն. Սրբութիւնը ուղարկելով իւր անուամբ ստացուած 64,000 ռուբլին ս. Էջմիածնի ս. Սինօդին պատուիրեց ա) անձեռնմխելի պահպանել այդ գումարը, գ) գումարը կոչել «Դրամագլուխ Աղէքսանդր Ասլանեան Քարասեանի», գ) գումարից ստացած ⁰/₀⁰/₀-ը տարէց-տարի յանձնել ի գործադրութիւն որոշեալ հաստատութիւններին, ըստ ցանկութեան կտակողի:

Վեհ. Հայրապետն իւր այս կարգադրութիւնների համար առանձին Կոնդակով, յանուն կտակակատարների, ապրիլ 28, № 726, յայտնեց, իւր օրհնութիւնն առաքելով նոցա և հանգուցեալի ժառանգներին, որպէս զի սիրով հետեին իրենց յիշատակաց արժանի հօրը և իրենց կողմից ևս ազգային լուսաւորութեան և քաղաքակրթական սեղանի վերայ դնեն իրենց անձնական լուծման:

Ն. Սրբութիւնն ի նկատի ունենալով Մ. Աթոռի Հոգևոր Ճեմարանի գեր. Տեսչի միջնորդութիւնը, որով խնդրում էր հաճել ընդ առաջ գնալ Ճեմարանի ուսուցչական մարմնի խնդրին, յաւելումն անել այս ուսումնական տարուայ ստացած ոսճկի վերայ, ի նկատի ունենալով կեանքի այժմեան ծանր պայմանները,—Ն. Սրբութեան հաճելի եղաւ յարգել այդ միջնորդութիւնը և ուսուցչական մարմնի խնդիրը և պատուիրեց ա. Էջմիածնի Սինոդին յաւելումն կատարել Ճեմարանի ուսուցչական մարմնի այս ուսումնական տարուայ ստացած ոսճկի քաւակի վերայ 40⁰/₀։

* * *

Ապրիլ 30-ին գեր. Տ. Գարեգին եպիսկոպոս ստանալով Ն. Ս. Օծութեան օրհնութիւնը, մեկնեց Մոսկուա և Ռուսաստանի միւս քաղաքները՝ Ն. Նախիջևան, Ռոստով, Եկատերինոգար, Արմաւիր ևյլն. շարունակելու իւր սկսած առաքելութիւնը՝ Մ. Աթոռի Հ. Ճեմարանի ապահովութեան խնդիրը Հայ Ժողովրդի առաջ դնելու։

Յուսով ենք, որ մեր ազգայինները նոյն սիրով և խնամօտ հոգածութեամբ կվերաբերեն այդ շատ կարևոր խնդրին, ինչպէս Պետրոգրադի հայ գաղութը։

† Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐԲԵՊ. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆ

Մարտ ամսուայ ընթացքում Մայր Աթոռի միաբանութիւնը զգալի կորուստներ ունեցաւ։

Մարտի 4-ին Քիշինևում իւր մահկանացուն կնքեց Նոր Նախիջևանի և Բեառարաքիայի առաջնորդ Տ. Ներսէս արքեպիսկոպոսը։

Ծնուել է Վաղարշապատում. 1844 թուին. կրթութիւնը ստացել է ա. Էջմիածնի Փառանգաւորաց դպրոցում, որի լիակատար դասընթացքն աւարտել է 1862 թուին. նոյն թուին էլ մտել է Մայր Աթոռի միաբանութեան շարքը։

1872 թուին ստացել է վարդապետութիւն. 1879 թուին եպիսկոպոսութիւն, 1897 թ. արքեպիսկոպոսութիւն:

Վարել է մի շարք պաշտօններ՝ եղել է Էջմիածնի մատենադարանապետ, Վանական կառավարութեան անդամ. ապա և նախագահ, Սինօղի դանձապահ և ապա անդամ. 1891 թուին հայ եկեղեցու շահը պաշապանելու պատճառով խիստ ընդհարում է ունեցել Սինօղի դատախազի հետ, որի պատճառով կայսեր կարգադրութեամբ աքսորուել է Գօլտաւա, ուր և մնացել է մինչև 1893 թիւը:

Աքսորից վերադառնալուց յետոյ կրկին Մայր Աթոռում պաշտօններ է վարել մինչև որ 1896 թուին նշանակուել է Երևանի փոխ թեմակալ. 1899 թուին նշանակուել է Նոր Նախիջևանի և Բեսսարաբիայի առաջնորդ, ուր և մնաց մինչև իւր կեանքի վերջը:

Ներսէս արքեպիսկոպոսը եղել է հայ եկեղեցու ազգային շահերի պաշտպան, համեստ ու մեղմ բնավորութեան տէր:

Տ. Ներսէս արքեպիսկոպոսի մահուամբ հայ եկեղեցին զրկուեց իւր համեստ, անկեղծ աշխատաւորների մէկից:

Տէրը լուսաւորէ հանգուցեալի հողին:

† Տ. ԱՆՏՈՆ Վ. ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆ

Մարտի 20-ին Հռիփսիմէի վանքում կարճատե հիւանդութիւնից յետոյ վախճանուեց Անտոն վ. Վարդազարեանը:

Ծնուած է 1842 թուին, Արցախի Մարաղա գիւղում. վարդապետութեան աստիճան է ստացել 1876 թուին և նշանակուել է Ամարասի միաբան. ուր և վանահօր պաշտօնն է վարել բաւական տարիներ. այնուհետեւ եղել է Գանձասարի վանահայր: Այստեղ նա կարողացել է իւր եռանդով, դրսի գիւղացիների աջակցութեամբ երկյարկանի մի շէնք կառուցանել ուխտաւորների համար, որը մինչև այժմ էլ միակ կանգուն շէնքն է մնում հոյակապ

Գանձասարի վանքում: Այնուհետև նա վարել է դրսի վանքերում վանահայրութեան պաշտօն. Մայր Աթոռում եղել է Աղարակի կառավարիչ, Վանական կառավարութեան գանձապահ, անդամ և նախագահ:

Անտոն վարդապետը ժրաշան աշխատաւոր էր ու վանքը շէնացնող միաբան:

Տէրը լուսաւորէ հանգուցեալի հոգին:

† Տ. ԵՍԸՅԻ Վ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Մարտի 22-ին նրեանում իւր մահկանացուն կնքեց Եսայի վ. Յովսէփեանը:

Ծնուած է 1833 թուին. Մակուում. վարդապետութեան աստիճան է ստացել 1862 թուին, մօտ 40 տարի եղել է Թաղէոս առաքեալի վանքի վանահայր. ապա տեղափոխուել է Մայր Աթոռ, վարել է Գայանէի վանքի վանահօր, միաբանութեան խոստովանահօր պաշտօն:

Եսայի վարդապետը համեստ, աշխարհից քաշուած առանձնացած կեանք վարող միաբան էր. միաբանութիւնը յարգում էր ծերունագարդ կրօնաւորին: Ներկայ Վեհափառ Հայրապետը նրա վարդապետութեան 50-ամեակը կատարել տուեց, պարգևատրելով ծաղկեայ փիլոնով:

Տէրը լուսաւորէ հանգուցեալի հոգին:

